



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 5-րդ մասի, 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ կետի, 39.5 հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 7.1 կետի 3-րդ ենթակետի, 7.2 կետի, 7.4 կետի 2-րդ ենթակետի, 7.5, 7.6, 7.7, 12.1, 13.2, 14.1, 14.2 կետերի, ինչպես նաև 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամներ և կարգապահական վարույթի գործը փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը նախապատրաստող փաստաբաններ (կարգապահական գործը նախապատրաստող անձինք) ընտրելու, ինչպես նաև «Փաստաբանի օր» սահմանելու անհրաժեշտությունը,

#### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

**1. 2017 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10<sup>00</sup>-ից Երևան քաղաքի Ջաքիյան 2 հասցեում գրնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.**

- 1.1. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.**
- 1.2. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն.**
- 1.3. «Փաստաբանի օր» սահմանելու մասին հարց:**

**2. Սահմանել, որ՝**

- 2.1. Օրակարգային հարցերով քվեարկությունը (ընտրությունը) սկսվում է 2017 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10<sup>00</sup>-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17<sup>00</sup>-ին.**
- 2.2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2017 թվականի հունվարի 14-ից (ներառյալ) և ավարտվում է 2017**

21 դեկտեմբերի 2016թ.

թիվ 500-Լ

թվականի հունվարի 19-ին (ներառյալ).

2.3. «Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանները կարող են փաստաբանի օրվա առաջարկները սահմանված կարգով ներկայացնել 2017 թվականի հունվարի 14-ից (ներառյալ) մինչև 2017 թվականի հունվարի 19-ը (ներառյալ).

2.4. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց թեկնածուների քարոզչությունը սկսվում է 2017 թվականի հունվարի 20-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի փետրվարի 9-ին, ժամը 18<sup>00</sup>-ին:

3. Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի ծանուցման ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

4. Հաստատել ««Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին» կարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

5. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական փնտրենին՝

- ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի մասին ծանուցել փաստաբաններին էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու, 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթում ծանուցումը տպագրելու, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում և վարչական շենքում (ք. Երևան, Ջաբիյան փողոց 2) հայտարարությունների ցուցատախտակին ծանուցումը հրատարակելու միջոցով.
- օժանդակել հաշվիչ հանձնաժողովին՝ ժողովի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

21 դեկտեմբերի 2016թ.

թիվ 500-Լ

ք. Երևան